ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» ապրիլի 2014 թվականի N 61 –Ա

ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԵԴԱԼՆԵՐ ՆՎԱՃԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրեցի մարզիկները, մասնակցելով 2014 թվականի ապրիլի 10-13-ը Իսպանիայում կայացած սամբոյի Եվրոպայի երիտասարդների առաջնությանը, հասան աննախադեպ հաջողության: Մխիթարյան Գրիգորը և Զատիկյան Լենդրուշը նվաճեցին ոսկե, իսկ Մաիլյան Գոռը, Նազարյան Միշան, Սահակյան Սեյրանը՝ բրոնզե մեդալներ:

Գյումրեցի մարզիկ Տիգրան Մարտիրոսյանը, մասնակցելով 2014 թվականի ապրիլի 7-13-ը Իսրայելի Թել-Ավիվ քաղաքում տեղի ունեցած ծանրամարտի Եվրոպայի առաջնությանը, վնասվածքի պատճառով ընդհանուր հաշվարկով գրավեց 4-րդ տեղը, պոկում վարժությունից՝ նվաճելով մեկ ոսկե մեդալ:

Գյումրեցի մարզիկ Մնաց Խալաթյանը, մասնակցելով 2014 թվականի մարտի 22-23-ը Ալգաթաուում կայացած Կյուկուշինկայի կարատեի աշխարհի երիտասարդների առաջնությանը գրավեց 2-րդ տեղը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ելնելով գյումրեցի մարզիկներին դրամական օգնություն տրամադրելու անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Մեդալներ նվաճած մարզիկներին և նրանց մարզիչներին տրամադրել դրամական օգնություն 850.000 դրամ (ութ հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով, համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Լենա Ջիլավյանին գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2014թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4729) «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

Կողմ (16) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Ա.Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____

Ա.Գրիգորյան _____